# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

**Պետական մարմնի անվանումը՝** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

**Ամփոփաթերթի կազմման ամսաթիվը՝** 10.04.2025թ.

| # | Դիտողության/ առաջարկի բովանդակությունը[1] | Առնչվող ոլորտը, ծրագիրը, միջոցառումը | Դիտողության/ առաջարկի հեղինակը | Դիտողության/ առաջարկի ներկայացման ամսաթիվը | Պետական մարմնի դիրքորոշումը/ արձագանքը դիտողության/ առաջարկի վերաբերյալ | Դիրքորոշման ներկայացման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. | **Ֆերդինանտ Մանուկյանի Սասունցիների պարը խճանկարը պապմոնտաժում, վերանորոգում** Սպիտակի երկրաշարժից հետո կիսափլված վիճակում է գտնվում Գյումրիում Սևյանի մշակույթի պալատը, որը հանրապետական նշանակության պատմամշակութային հուշարձան է: Այնտեղ է գտնվում նաև Ֆերդինանտ Մանուկյանի «Սասունցիների պարը» խճանկարը, որը | **Մշակույթ** «**1075**. Մշակութային ժառանգության ծրագիր», «**21001**.Պատմության և մշակույթի հուշարձանների ամրակայում, նորոգում, վերականգնում» | «Ֆիլհարմոնիա» պրոդյուսերական կենտրոն | 07.04.20.25թ. | Չի ընդունվել: Լիազոր մարմնի կողմից նշվել է, որ ՀՀ-ում կան 600 վթարային վիճակում հուշարձաններ, որոնք ամեն տարի պետական բյուջեի միջոցների հաշվին վերականգնվում են: Մասնավորապես վերջին տարիներին վերականգնվում են նաև մոնումենտալ արվեստի հուշարձաններ՝ | 08.04.2025 թ. |

[1] Բովանդակության մանրամասն նկարագրությունը ներկայացված է ամփոփաթերթին կից առաջարկություններում:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նույնպես պատմամշակութային հուշարձան է: Նախաձեռնվել է վերականգնել մշակույթի պալատը որպես ֆիլհարմոնիայի համերգային դահլիճ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմմանը զուգահեռ անհրաժեշտ է ապամոնտաժել և վերանորոգել խճանկարը, որը քայքայվել է բաց երկնքի տակ: | | | | որմնանկարներ և խճանկարներ: Սլյանի մշակույթի տունը, ինչպես նաև «Սասունցիների պարը» խճանկարը համայնքային սեփականություն է, ուստի սեփականատերը պարտավոր է այն պահպանել՝ այդ թվում ամրակայել, նորոգել ու վերականգնել: Խճանկարը տեղափոխումը պետք է հիմնավորված լինի՝ տեղափոխման վայրը հստակեցվի և պայմանները բավարարվեն: Միաժամանակ ներկայացվել է, որ համաձայն օրենքով սահմանված կարգի՝ հուշարձանի տեղափոխումը կատարվում է բացառիկ դեպքերում և ՀՀ կառավարության որոշմամբ՝ լիազոր մարմնի դրական եզրակացությամբ: Սլյանի մշակույթի տունը խճանկարով հանդերձ տարիներ առաջ համայնքի կողմից | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | կազմակերպած հանրային քննարկման արդյունքում հանձնված է «Բալետ 2021»-ին, որը մինչ օրս հուշարձանների վերականգնման գիտանախագծային փաստաթղթեր լիազոր մարմնին չի ներկայացրել: Դիմումատուին առաջարկվել է դիմել համայնքին, որից հետո հնարավոր կլինի հուշարձանի տեղափոխման հարցը քննարկել ԿԳՄՍՆ միջնաժամկետ ծախսային ծրագրում ընդգրկելու համար: | |
| 2. | **Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի նոր շենքի կառուցման նախագիծ- նախահաշվի պատվիրում՝ նոր շենքի կառուցման նպատակով** | **Կրթություն** «**1045**. Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր» | Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ | 04.04.2025թ | Չի ընդունվել: Համաձայն ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրի «Կրթություն» բաժնի 11-րդ՝ «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանցում իրականացվող ծրագրերի | 08.04.2025թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | տեղաբաշխման ռացիոնալացում և հաստատությունների վերակազմակերպում (օպտիմալացում)», միջոցառման կատարման ապահովմամբ ներկայացված առաջարկը կքննարկվի Արմավիրի մարզում օպտիմալացման (առկայության դեպքում) գործընթացի ավարտից հետո: | |
| 3. | **ՃՇՀԱՀ ՄՄԿ քոլեջի կողմից կարճաժամկետ ծրագրերի իրականացում՝** միտված «Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Հարդարման շինարարական աշխատանքներ», «Համակարգչային օպերատորություն» մասնագիտություններով գիտելիքների, կարողությունների, ունակությունների ձևավորմանը | **Կրթություն** «**1045**. Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր» | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջին մասնագիտական կրթության քոլեջ | 04.04.2025 | Չի ընդունվել: Կարճաժամկետ ծրագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ է սահմանված կարգով ներկայացնել դիմում նախարարություն՝ հայտով կցած լրացուցիչ կարճաժամկետ կրթական ծրագրերի հետագա ընթացքն ապահովելու համար: Իսկ սույն գործընթացը ծախս չի ենթադրում: | 08.04.2025թ. |
| 4. | **ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի 2291-Լ որոշման մեջ փոփոխությունների իրականացում՝ 2025-** | **Կրթություն** «**1045**. Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր», | Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի | 07.04.2025թ. | Հարցը քննարկման փուլում է, որևէ փոփոխության դեպքում ուսումնական հաստատությունները | 08.04.2025թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **2026թթ. ուսումնական տարում ընդունված ուսանողներին ուսման վարձի փոխհատուցման նպատակով** | «**12012**. 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում արհեստագործական հիմնական կրթական ծրագրում ընգրկված ուսանողների ուսման վարձի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում», «**12013**. 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրում ընգրկված ուսանողների ուսման վարձի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում», «**12015**. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների Հայաստանի Հանրապետության արհեստագործական և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում | պետական քոլեջ (ՊՈԱԿ) */առաջարկը հնչել է բանավոր՝ հանրային քննարկման ժամանակ/* | | գրավոր կտեղեկացվեն: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում» | | | | |
| 5. | **Դպրոցահեն բարձր տեխնոլոգիաների գյուղատնտեսական ենթակառուցվածքները կրթության որակի բարելավման և հանրակրթության պետական նոր չափորոշչով նախատեսված կարողունակություններ ձևավորելու կարողությունների բարձրացման հարթակներ** | **Կրթություն** «**1192**.Կրթության որակի ապահովում» ծրագիր, «**11006**.Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում» | ԿԶՆԱԿ հիմնադրամի Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն հիմնարկ | 07.04.2025թ. | Չի ընդունվել այն հիմնավորմամբ, որ ԿԶՆԱԿ հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի ծախսերը ներառված են «1192.Կրթության որակի ապահովում» ծրագիր «11006.Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում» միջոցառման ծրագրի 2026-2028 ՄԺԾԾ հայտում: | 08.04.2025թ. |
| 6. | **Երկարօրյա ուսուցում սահմանամերձ բնակավայրերի դպրոցների տարրական և հիմնական մակարդակների համար** | **Կրթություն** «**1146**.Հանրակրթության ծրագիր», «**11001**. Տարրական ընդհանուր հանրակրթություն», «**11002**. Հիմնական ընդհանուր հանրակրթություն», «**11003**. Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» կամ նոր դասիչ. «Երկարօրյա ուսուցում սահմանամերձ բնակավայրերի դպրոցների տարրական և հիմնական | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ | 02.04.2025թ. | Չի ընդունվել: Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.10.2020թ. N 38-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի | 08.04.2025թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մակարդակների համար» | | | 04.09.2023թ. N 113-Ն հրամանով: Հաստատություններում նախատեսվող երկարօրյա ուսուցումն իրականացվում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու համար՝ սովորողների մոտ ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու, ինչպես նաև ուսումնառության ցածր արդյունքների դեպքում ծրագրային նյութի յուրացման ապահովման նպատակով: Այս ուղղությամբ ՀՀ պետական բյուջեից հաստատություններին տրվում է անհրաժեշտ ֆինանսավորում, և որևէ վճար ծնողի կողմից չի պահանջվում: Բացի այդ՝ 2023թ. հունվարից ՀՀ 10 մարզերի 1075 դպրոցների 1-ից 4-րդ դասարանների հազարավոր երեխաներ սնունդ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ստանում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Ընդ որում՝ շահառուների թիվը մեծացել է, քանի որ 2023թ. սեպտեմբերի 19-ից ԼՂ բռնի տեղահանված ավելի քան 17000 դպրոցահասակ երեխաներ են ընդգրկվել ՀՀ մարզերի դպրոցներում: Առաջին իսկ օրերից լուծվել է տարրական դասարանների երեխաների սննդի հարցը, և այժմ նրանք մյուս աշակերտների հետ միասին տաք և առողջ սնունդ են ստանում: Բացի այդ՝ ներկայում նախատեսվող կրթահամալիրները՝ ըստ նշանակության օգտագործվելու են որպես համայնքային կենտրոն՝ իրականացնելով նախադպրոցական և դպրոցական կրթություն, ոչ ֆորմալ կրթություն, մարզաձևերով զբաղվելու | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հնարավորություն, մշակութային և համայնքային միջոցառումներ, ուսուցում ողջ կյանքի ընթացքում, շարունակական կրթություն մեծահասակների համար: Այդ համատեքստում դրանք նույնպես նախատեսելու են երկարօրյա ծառայություններ: | |
| 7. | **«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում** | **Կրթություն** «**1146**.Հանրակրթության ծրագիր», «**11003.**Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» | «Մեդիան հանուն կրթության» ՀԿ | 07.04.2025թ. | Չի ընդունվել: ՀՀ կառավարության 04.02.2021թ.N 136-Ն որոշմամբ հաստատվել է Հանրակրթության պետական նոր չափորոշիչը, որի 15-րդ կետով սահմանված՝ հանրակրթական ծրագրերի 7 ուսումնական բնագավառներից մեկը «Արվեստ և արհեստ» բնագավառն է: Այն իրականացվում է միջառարկայական կապերի ակտիվ ներգրավմամբ՝ արվեստի և ժողովրդական արհեստների տարբեր տեսակներին հաղորդակցվելու, | 08.04.2025թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ինքնուրույն գեղարվեստական-ստեղծագործական գործունեություն ծավալելու միջոցով և նպաստում է ժողովրդական ավանդույթներին և մշակութային ժառանգությանը հաղորդակցվելուն: Հանրակրթության նոր պետական չափորոշչի ներդրմանը զուգահեռ «Ազգային երգ ու պար» առարկան հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվելու է «Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառի առարկայական չափորոշչով սահմանված առարկայախմբի շրջանակում: «Արվեստ և արհեստ» բնագավառը հանրակրթական ընդհանուր պետական ծրագրի 1-12-րդ դասարաններում ներկայացվում է երաժշտություն, կերպարվեստ, պար, թատրոն և | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | դեկորատիվ-կիրառական արվեստ (ԴԿԱ) ուսումնական առարկաներով՝ տարրական, միջին և ավագ դպրոցներում՝ առանձին կամ ինտեգրված դասընթացով: Կրթական քաղաքականության ներդրման հավասար մոտեցում ցուցաբերելու սկզբունքից ելնելով՝ «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամի կողմից միջոցառման շրջանակում վերապատրաստված մասնագետները կարող են դասավանդել «Արվեստ-արհեստ» ուսումնական բնագավառի առարկաներից որևէ մեկը՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի պահանջներին բավարարելու դեպքում: | |
| 8. | **Ուսուցիչների նախաձեռնողականության** | **Կրթություն** | «Մեդիան հանուն կրթության» ՀԿ | 07.04.2025թ. | Չի ընդունվել, քանի որ «Տարվա | 08.04.2025թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **ու աշակերտների նկատմամբ անհատական մոտեցման ցուցաբերման խրախուսում՝ նպաստելով կրթության բովանդակության ու որակի համար կարևոր ուղղությանը** | «**1146**.Հանրակրթության ծրագիր», «**11017**. Կրթական հաստատություններին ուսումնամեթոդական նյութերով ապահովում», «**11014**.Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում», «**12012**.«Տարվա լավագույնները» միջոցառման շրջանակում հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին պարգևատրում» | | | լավագույնները» միջոցառումն ունի կոնկրետ նպատակ, և ուղղված է Հանրակրթության պետական չափորոշչի ներդրման խրախուսմանը՝ աջակցելով ուսուցիչներին տարածելու համար իրենց լավագույն փորձը: Ուսուցիչների նախաձեռնողականությունը կարող է դրսևորվել այս և նմանատիպ այլ ծրագրերով: | |
| 9. | **Հանրակրթական դպրոցներում հատուկ կարիք ունեցող երեխաների, մասնավորապես, վարքային սուր խնդիրներ ունեցողների հետ աշխատելու մասնագիտական կարողություններ ունեցող մանկավարժների ներգրավում և դպրոցներում համապատասխան միջոցներ ունեցող առանձին դասարանների ապահովում՝ հատուկ կարիք ունեցող երեխաների համար անհատական ծրագրով աշխատելու համար** | **Կրթություն** «**1146**.Հանրակրթության ծրագիր», «**11004**. Տարրական հատուկ հանրակրթություն», «**11006.**Միջնակարգ հատուկ հանրակրթություն» | «Մեդիան հանուն կրթության» ՀԿ | 07.04.2025թ. | Չի ընդունվել այն հիմնավորմամբ, որ դպրոցներում առկա են ուսուցչի օգնականի և հոգեբանի հաստիքներ և դպրոցն ստանում է ՏՄԱԿ-ի աջակցությունը: Նոր մասնագետների ներգրավման անհրաժեշտություն չկա: | 08.04.2025թ. |
| 10. | **Էլեկտրոնային եղանակով կամավոր ատեստավորման** | **Կրթություն** | «Մեդիան հանուն կրթության» ՀԿ | 07.04.2025թ. | Չի ընդունվել: | 08.04.2025թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **համար տեխնիկական անհրաժեշտ ծառայությունների ֆինանսավորում** | «**1146**.Հանրակրթության ծրագիր», «**11025**. Գնահատման և թեստավորման ծառայություններ» | | | 2024 թ.-ից ուսուցիչների կամավոր ատեստավորումն արդեն իսկ անցկացվում է էլեկտրոնային եղանակով: Բացի այդ՝ կամավոր ատեստավորման էլեկտրոնային թեսթավորման համակարգի բարելավման, լավարկման նպատակով 2025թ. ՀՀ ԿԳՄՍՆ կողմից մենթոր դպրոցներից ընտրվել և հաստատվել են 40 քննական կենտրոն հանդիսացող հանրակրթական ուսումնական հաստատություններ: Միաժամանակ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ին հանձնարարված է պետական միջոցների հաշվին հնարավորինս սեղմ ժամկետում վերոնշյալ ուսումնական հաստատությունները հագեցնել ժամանակակից ՏՀՏ լաբորատոր սարքավորումներով և | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | գույքով: Արդեն հաստատված են սարքավորումների տեխնիկական չափանիշները: | |
| 11. | **Դպրոցներում լրագրողների կողմից մեդիագրագիտության պրակտիկ դասընթացներ սովորողների համար՝ միաժամանակ նպաստելով նաև (մասնավորապես՝ հասարակագիտության) ուսուցիչների մեդիահմտությունների զարգացմանը** | **Կրթություն** «**1146**.Հանրակրթության ծրագիր», «**11002**.Հիմնական ընդհանուր հանրակրթություն» | «Մեդիան հանուն կրթության» ՀԿ | 07.04.2025թ. | Չի ընդունվել այն հիմնավորմամբ, որ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշչում և օրինակելի ծրագրում ներառվել է «21-րդ դարի հմտությունների խթանում» բաժինը, որի համաձայն Մեդիագրագիտության թեմայով վերապատրաստումնե րը դարձել են պարտադիր բոլոր ուսուցիչների համար: «21-րդ դարի հմտությունների խթանում» բաժնի 3-րդ նպատակով սահմանված է՝ «Ուսուցիչը կարողանում է սովորողների մոտ զարգացնել մեդիագրագիտության հմտություններ», որի համար սահմանված վերջնարդյունքներն են՝ ըստ մակարդակների. | 08.04.2025թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ➢ ուսուցիչը տեղյակ է մեդիագրագիտության հմտությունների զարգացման ձևերի մասին<br>➢ ուսուցիչը կիրառում է մեդիագրագիտության հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդներ և ռեսուրսներ.<br>➢ ուսուցիչը հարմարեցնում է մեդիագրագիտության հմտությունների զարգացմանն ուղղված մեթոդները և ռեսուրսները դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին.<br>➢ ուսուցիչը ստեղծում է բնականոն միջավայր՝ առավելագույն հասցնելու սովորողի կողմից մեդիագրագիտության հմտությունների ակտիվ կիրառումը:<br><br>Մշակվել է «Մեդիագրագիտության խթանումը ուսուցիչների մոտ» | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | թեմայով 2 մոդուլ ներառող ինքնաշխատ դասընթացը ուսուցիչների համար, որի նպատակներն են՝ ուսուցիչների իրազեկվածության մակարդակի բարձրացումը մեդիագրագիտության հիմունքների և կարևորության վերաբերյալ, նրանց՝ լրատվության վերլուծության և ստուգման հմտությունների զարգացումը, կեղծ տեղեկատվության տարածման մեխանիզմների ու վիզուալ մեդիայի վերլուծության մեթոդների, մեդիա բովանդակության ստեղծման և տարածման հիմունքների ուսումնասիրությունը, սոցիալական մեդիայի վերլուծության հմտությունների զարգացումը, մեդիագրագիտության միջոցով քաղաքացիական ներգրավվածության խթանումը: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | «Մեդիագրագիտության խթանումը ուսուցիչների մոտ» թեմայով իրականացվել են դասընթացներ երկու փուլով: 1-ին փուլին մասնակցել են 76 ուսուցիչներ՝ ՀՀ բոլոր մարզերի և Երևան քաղաքի մենթոր դպրոցներից յուրաքանչյուրից 1-2-ական, իսկ 2-րդ փուլում արդեն վերապատրաստված 76 ուսուցիչներից ընտրվել են 25 մենթոր նույն թեմայի շրջանակում մյուս ուսուցիչներին վերապատրաստելու համար: Արդյունքում «Մեդիագրագիտության խթանումը ուսուցիչների մոտ» թեմայով վերապատրաստվել է շուրջ 5540 ուսուցիչ ՀՀ մարզերի և Երևանի դպրոցներից: «Մեդիագրագիտությունը որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» թեմայով սեմինարի | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | անցկացում, ՄՆԿ ՀԿ-ի հետ համագործակցությամբ, որին մասնակցել են 243 ուսուցիչ ՀՀ մարզերի և Երևանի դպրոցներից: Վեբինարի անցկացում «Մեդիագրագիտություն, թվային անվտանգություն, Կիբեռանվտանգություն» թեմայով, որին մասնակցել են 152 ուսուցիչ ՀՀ մարզերի և Երևանի դպրոցներից: Մի շարք նախագծերի և խորհրդատվությունների շրջանակում անդրադարձ է կատարվել մեդիագրագիտությանը /օրինակ, «Մոլորակն ունի իմ ու քո օգնության կարիքը»՝ 261 մասնակից, «Պատմաբանի օր»՝ 179 մասնակից/: | |